

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության տարածքում բնակչության
գազամատակարարման վերականգնման և գազիֆիկացման վերաբերյալ

2002-2010 թվականների ընթացքում, միայն «Գազամատակարարման վերականգնման և գազաֆիկացման» ծրագրի շրջանակներում ընկերության կողմից ներդրվել է 33.6 մլրդ. դրամ, որից 19.4 մլրդ. դրամ շինհավաքակցման աշխատանքների և 14.2 մլրդ.դրամ կենցաղային գազահաշվիչների տեղադրման ուղղությամբ:

«ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ կողմից գազիֆիկացման նպատակով կատարված ներդրումներն ըստ տարիների

/մլրդ.դրամ/

Տարեթիվ	Ընդամենը ներդրումներ	Շին հավաքակցում	Կենցաղային գազահաշվիչներ
2002թ.	0.8	0.2	0.6
2003թ.	4.0	2.4	1.7
2004թ.	7.1	4.5	2.6
2005թ.	8.3	5.7	2.6
2006թ.	6.3	4.1	2.1
2007թ.	2.8	0.8	2.0
2008թ.	2.8	1.1	1.7
2009թ.	1.1	0.4	0.7
2010թ.	0.4	0.2	0.2
Ընդամենը	33.6	19.4	14.2

Վերոնշյալ ներդրումների արդյունքում 2002-2010թթ. ընթացքում հնարավոր բաժանորդների թիվն ավելացել է 514463-ով, կազմելով 695945, իսկ փաստացի գազասպառողներինը՝ 490193-ով, կազմելով 602710: Թվով 93235 տնտեսություններ ցանկության դեպքում ևս կարող են դառնալ գազասպառող բաժանորդներ:

«ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ հնարավոր, փաստացի և պոտենցիալ բաժանորդների քանակը ըստ տարիների

Տարեթիվ	Հնարավոր բաժանորդներ			Փաստացի բաժանորդներ			Պոտենցիալ բաժանորդներ	
	Բաժանորդների աճը տարվա ընթացքում	Տնտեսություններ	%-ին աճ	Բաժանորդների աճը տարվա ընթացքում	Տնտեսություններ	%-ին աճ	Տնտեսություններ	%-ին աճ
Առ 01.01.2002թ.		181482			112517		68965	
Առ 01.01.2003թ.	24050	205532	13.3	20095	132612	17.9	72920	5.7
Առ 01.01.2004թ.	59344	264876	28.9	54063	186675	40.8	78201	7.2
Առ 01.01.2005թ.	110969	375845	41.9	83045	269720	44.5	106125	35.7
Առ 01.01.2006թ.	134415	510260	35.8	90849	360569	33.7	149691	41.0
Առ 01.01.2007թ.	77615	587875	15.2	78221	438790	21.7	149085	-0.4
Առ 01.01.2008թ.	66267	654142	11.3	77479	516269	17.7	137873	-8.1
Առ 01.01.2009թ.	20911	675053	3.2	57686	573955	11.2	101098	-26.6
Առ 01.01.2010թ.	16767	691820	2.5	22398	596353	3.9	95467	-5.5
Առ 01.07.2010թ.	4125	695945	0.6	6357	602710	1.1	93235	-2.3

Այսպիսով, գազիֆիկացման աշխատանքների արդյունքում, նախկինում գազիֆիկացված 388 բնակավայրերի փոխարեն ներկայումս բնական գազից օգտվելու հնարավորություն ունեն 560 բնակավայրեր:

Վերականգնված և գազաֆիկացված բնակավայրեր

Բնակավայրեր	Ընդամենը	2010թ. գազիֆիկացված
Քաղաքային	49	46
Գյուղական	891	514
Ընդամենը	940	560